ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԳՅՈՒՂԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԱԶԸ XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Ն. Ք. ԱՎԱԳՅԱՆ

Սեբաստիա քաղաքը և Աալիս գետի վերին հովիտը հնագույն ժամանակներից ի վեր բնակեցված էին հայերով. այդ պատճառով էլ հռոմեական և բյուզանդական տիրապետության ժամանակ կոչվել է Փոքր Հայք։ Թեև քաղաքականապես երբեք բուն Հայաստանի մասը չի կազմել, սակայն դարերի ընթացքում, քաղաքական հանգամանքների բերումով, հաճախ ընդունել է Հայաստանից գաղթական հայերի, որով և կարողացել է պահել ազգային իր դիմագիծն ու տարազը։ Իսլամական տիրապետության երկար դարերի ընթացքում էլ հայ տարրը, որպես բայա, պարտավոր էր իր տարազով զատորոշվել մոլեռանդ և գոռող տիրապետողներից. այս հանգամանքը ևս նպաստել է ավանդական տարազի պահպանմանը։

XIX դարում և XX դարի սկզբին Սեբաստիայի նահանգի սահմաններն էին. հյուսիսից՝ Տրապիզոնի, արևելքից՝ Էրզրումի, հարավից՝ Խարբերդի և արևմուտքից՝ Անկարայի վիլայեթները. նահանգը բաղկացած էր չորս գավառներից՝ (սանջակ) Ամասիայի, Շապին Գարահիսարի, Թոքատի և Սեբաստիայի, վերջինս հանդիսանում էր նահանգային կենտրոն։

Աշխարհագրական դիրքով Սեբաստիայի գավառը Բարձր Հայքի լեռնային գոտիների շարունակությունն է և գտնվում է կլիմայական գրեթե նման պայմաններում, ուստի և բնական են ընդհանուր գծերը նաև ժողովրդական տարազում։ Կային որոշ վայրեր, ինչպես, օրինակ, Սեբաստիային մոտիկ Բրգնիկ գյուղը, որը, որպես կաթոլիկ համայնք մեկուսացած լինելով, մանավանդ կանանց տարազում ուներ որոշ ինքնատիպություն[1]. մասամբ այդպիսին էր նաև Մանճըլըգ[2] գյուղի տարազը, իսկ Աալիսի վերին հովտի հայկական գյուղերի տարազը գրեթե ընդհանուր նկարագիր ուներ։

Սեբաստիայի կանանց տարազի հիմնական բաղկացուցիչ մասերն էին՝ վերնազգեստ-անթարին (պարեղոտ), գոգնոցը, գոտին, կարճ վերնազգեստ-սալթան, գլխի հարդարանքը, զուլպաները և այլն։ Անթարու տակից մարմնի վրա գործածական էր սպիտակեղենը, որի համար օգտագործվում էր տեղական կտավը։ Կտավից էին կարում նաև կանանց փոքր գլխաշորը (տակի գլխաշոր), վերնազգեստների աստառը, տղամարդկանց շալվարի, բաճկոնի աստառը, ոտքի փաթաթանը։

Գզված բամբակը մանում էին ճախարակով կամ իլիկով և գործում հորան կտավ։ Ոչխարից և այծի հատուկ տեսակից՝ «ֆուլիկից» ստացված թելից պատրաստում էին բրդյա գործվածքներ և դրանցից կարում զգեստի տեսակները։ Փոքր Հայքում գործածական էր Կյուրինում արտադրված բրդյա գործվածքը։ Թելը կամ գործվածքը ներկելու համար գործածական էին բուսական ներկերը, հատկապես տորոնը, իսկ XX դարի սկզբին՝ նաև քիմիական ներկերը։

Սեբաստիան տեղի բնակչության կարիքները բավարարելուց բացի վաճառքի էր արտահանում ուրիշ գավառներ և Հայաստանի սահմաններից դուրս տորոն, այծի և ոչխարի բուրդ, սորթի[3] (աղվեսենի, սամույր, գայլենի)։ Սեբաստիայի վաճառականները դեռևս դարեր առաջ հասել են անգամ Ղրիմ, ոմանք էլ հաստատվել այնտեղ[4]։

Սեբաստիայի կանանց և տղամարդկանց տարազի մեջ կար ընդհանրություն, որով տարբերվում էր սահմանակից Կարինի, Կեսարիայի, Խարբերդի գավառներից։ Այդ ընդհանրությունը արտահայտվում էր գույների խայտաբղետությամբ[5]։ Նրբերանգ բրդյա թելերով ասեղնագործված

---

1 Գ. Սրվանձտյանց, Թորոս Աղբար, մասն 1, Կ. Պոլիս, 1879, էջ 201։

2 Ա. Պատրիկ, Հայկական տարազը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 1967, էջ 38։

3 Գ. Սրվանձտյանց, նշվ. աշխ., էջ 168։

4 Ա. Ալպոյաճյան, Պատմություն Եվդոկիո հայոց, Կահիրե, 1952, էջ 1301։

5 Վահան Համբարձումյան, Գյուղաշխարհ, Փարիզ, 1927, էջ 30։

կանացի զոգնոցները, զգեստի տեսակների գույներն ու նրանց համադրությունը, զարդաձևերը գավառի տարազը բնորոշող կարևոր առանձնահատկություններն էին։

Գոյություն ուներ կանացի վերնազգեստի (պարեգոտ, անթարի) երկու տարբերակ, որոնք զատորոշվում էին ձևվածքով։ Առաջին տարբերակը, որ տարածված էր Խորսանա, Խորոխոն, Թոդորակ, Դավրա, Խանծաո, Կովտուն գյուղերում, ուներ հետևյալ ձևը՝ առջևից երկու փեղկով էր, Կողքերում՝ գոտկատեղից ներքև, ճեղքով, երկար ուղիղ թևերով։ Տարվա ցուրտ և տաք եղանակներին կարվող վերնազգեստները ունեին նույն ձևը, միայն կտորի որակի տարբեր լինելն էր բնորոշ դարձնում օգտագործելու ժամանակը։ 50 սմ լայնություն ունեցող կտորը՝ երկայնակի երկտակ ծալած. վզի շրջանաձև փորվածքով և առջևի կողմը երկայնակի կիսած երկու հավասար մասի, կազմում էր վերնազգեստի հիմնական իրանը, որին ետևից և առջևի երկու փեղկերի կողքերից, գոտկատեղից վար լայնացնելու նպատակով միացվում էին ուղղանկյուն եռանկյունաձև կտորներ, ըստ որում յուրաքանչյուր եռանկյունին՝ շեղ կողմով։ Կողքի ճեղքերը, քղանցքը և առջևի փեղկերի եզրերի եռանկյունաձև կտորները կտրում էին ալիքաձև։ Քղանցքը կողքերի ճեղքի շնորհիվ ուներ թե՛ գործնական (աշխատանքի ժամանակ ծայրերը գոտու մեջ էին ամրացնում, որպեսզի ոտքերի ազատ շարժումներին չխանգարի) և թե՛ զեղագիտական նշանակություն։ Թևերը ձևավոր թևաբերանով էին և լայնակի կտորից, երբ կտորի մեկ լայնքը (մար) չէր բավարարում թևի անհրաժեշտ երկարությանը, վերևամասում ավելացվում էր փոքր հատված նույն կամ էլ նույնատիպ ուրիշ կտորից։ Մեկ վերնազգեստ-անթարի կարելու համար անհրաժեշտ էր 5 մետր գծավոր բամբակյա կտոր, նույնքան էլ կտավ կամ չիթ՝ աստառելու համար (տե՛ս աղյուսակ I, նկ. 1ա, բ)։



Աղ. I

Խորսանայում տարածված մահուդե կտորի վերնազգեստը առջևի երկու փեղկերի եզրերին չուներ ավելացված եռանկյունաձև կտորներ, հավանաբար մահուդյա կտորը լայն լինելու պատճառով կարիք չէր զգացվում նման եղանակով լայնացնել, իսկ Արաբկիրում արտադրված մանուսա կտորից կարված վերնազգեստի համար դրանց առկայությունը անհրաժեշտ էր։

6 Ընդհանրապես մահուդից կարված և հարսանեկան վերնազգեստն էր ունենում ալիքաձև եզրեր։

Վերնազգեստը զարդարելու կարևոր միջոց էր ոսկեթելով քղանցքի անկյունները և թևաբերանը, երբեմն էլ կարերը ասեղնագործելը։ Տարածված զարդարման ձև էր ոսկեթելի տրեզով (ղայթան) եզրապատելը։ Անթարու զարդարման նպատակին են ծառայել կրծքամասում ամրացված, մետաքսյա թելով պատված գնդաձև չորս կոճակներն ու նույն թելով հյուսված տրեզից պատրաստված նույնքան էլ օղերը։ Սեբաստիայում կանանց վերնազգեստ-անթարին, լինի ամենօրյա, թե տոնական կամ հարսանեկան, գրեթե նույն ձևով էր զարդարվում։

Հարսանեկան վերնազգեստը մեծ մասամբ կարում էին ղութնի կոչված մետաքսյա կտորից[7]։ Պարեգոտի զարդարման համար հատուկ են նտևից քղանցքում կենտրոնական կտորի վրա լայնակի դեղին գույնի գծանախշերը։ Այդ կատարվում էր երկու եղանակով՝ կամ կտորի պատրաստման ժամանակ անմիջապես հաստոցի վրա կամ էլ վերնազգեստը կարելու ժամանակ, ասեղնագործով կտորի հենքի թելերի մեջ մեկընդմեջ դեղին գույնի թել հագցնելու միջոցով։ Ըստ թանգարանային նյութերի XIX դարի վերջին ասեղնագործության փոխարեն դեղին գույնի ժապավեն կարելը նկատելի է ոչ միայն Սեբաստիայում, այլ նաև Արևմտյան Հայաստանի մյուս գավառներում։

Երկրորդ տարբերակը տարածված էր Տիվրիկում՝ Օդուր, Մրովանա, Աշուշեն, Կյուրեսին գյուղերում։ Այն կարում էին մեծ մասամբ դծավոր կտորից, հատկապես «մանուսայից», ձևվածքը հետևյալն էր՝ 46 սմ լայնություն ունեցող կտորի երկու երկարությունն ծալած, վզի կրծքի բացվածքով և նույն ուղղությամբ մեկ կտորը երկայնակի կիսած երկու մասի՝ կազմում էր երկրորդ տարբերակի հիմնական կորպուսը, որին կողերից եզրերին ավելացվում էին երկար եռանկյունաձև կտորներ (տե՛ս աղյուսակ 1, նկ. 2ա, 2բ), ըստ որում կողքերի եռանկյունիները սկսվում էին գրեթե թևատակի փոքր եռանկյունաձև հավելվածի մոտից կամ մոտ 5 սմ ներքևից։ Կողքի ճեղքերը քղանցքում կարճ էին։ Վերնազգեստը աջ կողքին կարի ուղղությամբ ուներ ներսի գրպան։ Եզրերը, թևերը ուղիղ էին և առաջին տարբերակի նման կտորի լայնքից էին ձևում։ Երկարացման նպատակով ավելացված հատվածը կարում էին թևաբերանին։ Կրծքի բացվածքի ամբողջ երկարությամբ ամրացված էին մետաքսաթելով պատված գնդաձև կոճակներ և նույնքան էլ նույն թելից հյուսված տրեզից (ղայթան) կոճակօղեր։ Այս տարբերակի համար անհրաժեշտ էր նույն քանակությամբ կտոր, որքան առաջին տարբերակի համար և նույնքան էլ աստառապատման համար։

Պարեգոտ-անգարին իր երկու տարբերակով հատուկ էր Արևմտյան Հայաստանի բազմաթիվ գավառներին։ Սեբաստիայի տարազի համալիրի մեջ այն ուներ յուրօրինակ տեսք։ Սեբաստիայում վերնազգեստի առանձնահատկությունը արտահայտվում էր կտորի գույնի և զարդարման եղանակով։

Կանանց տարազի բաղկացուցիչ մասերից մեկն էր անդրավարտիկը— չինթանը, որը, ըստ սովորության, երևում էր պարեգոտի կողքի ճեղքերից։ Այն կարում էին մետաքսյա կտորից սնդուսից կամ էլ բրդյա նուրբ կտորից։ Սեբաստիայի գավառում տարածված էր անդրավարտիկի երկու տարբերակ. առաջինը ձևում էին 90 սմ լայնություն ունեցող նուրբ բրդյա կտորի երկու լայնքից՝ մարից, որոնք միացվում էին միմյանց ներսի կարով (տե՛ս աղյուսակ 1, նկ. 3ա)։ Լայնացման նպատակով ձագում փողքերին միացվում էր կենտրոնում լայն, երկու ծայրը սուր ամբողջական հավելված (տե՛ս աղյուսակ 1, նկ. 3բ)։ Կողքերը առանց կարի էին, փողքը տրապեցիայի ձևով ամբողջական հատված էր (տե՛ս աղյուսակ 1, նկ. 3գ)։ Այս տարբերակը տարածված էր Խորոխոն, Զառա, Բոդորակ և այլ գյուղերում։ Երկրորդ տարբերակը ձևում էին 48 սմ լայնություն ունեցող կտորի 4 լայնքից՝ մարից, երկու փողքի միջև ավելացնում էին եռանկյունաձև երկարավուն հավելվածներ։ Այդ երկու մարերը միացվում էին իրար, իսկ նրանց միջև ավելացվում հավելվածը՝ ձագը։ Մեկ անդրավարտիկ կարելու համար անհրաժեշտ էր 48 սմ լայնություն ունեցող 4,5 մ կտոր։ Աստառապատման և փողաբերանին կարելու համար անհրաժեշտ էր 82 սմ լայնություն ունեցող 3 մ կտավ։ Գոտկատեղում 3,5 սմ խորությամբ արված շուլալ կարի միջոցով կազմվում էր խոնջանակապը անցկացնելու և կապելու հարմարանքը։ Այս տարբերակը լայն տարածում էր գտել Սեբաստիա քաղաքում։

Կանացի զգեստի համալիրի մեջ անհրաժեշտ մաս էր գոգնոցը, որը սովորաբար կարմիր կամ կապույտ գույնի խոշոր հյուսվածքով բրդյա կտորից էին կարում։ Հայաստանի ցուրտ կլիմա ունեցող գավառներում գոգնոցը սրունքները տաք պահելու նպատակին էր ծառայում։ Գոգնոցի ամբողջ մակերեսը ասեղնագործում էին բրդյա կունավոր թելերով, որը երբեմն կենտրոնում ու-

7 Տե՛ս Հայաստանի պատմության թանգարանի ազգագրական ֆոնդ, №№ 8442 (գ. Օդուր), 8490/1 (գ. Խորոխոն) և այլն։

ննում էր քառանկյունաձև ժապավենազարդ[8]։ Գոգնոցի ասեղնագործության մեջ ընդունված էին երկրաչափական նախշերը, բեկբեկուն գծանախշերը, ռոմբերը[9] և այլն։ Հայաստանի պատմության թանգարանի ազգագրական ֆոնդի Սեբաստիային վերաբերող հավաքածուի մեջ եղած բոլոր գոգնոցները առանց բացառության ունեն ռոմբաձև նախշեր։ Գոգնոցի ներքևի եզրին և եռանմն էլ շուրջը հատուկ է գունավոր բրդյա թելերով ասեղնագործված եռանկյունաձև նախշերի շորսընդմեջ դասավորած տարբեր գույնի փոքր փնջիկների շարանը (տե՛ս նկ. 1, 2)։

Նկ. 1. Գոգնոց, ասեղնագործված բրդյա գունավոր թելերով, 1886 թ., Սեբաստիայի շրջ. գ. Խորոխոն

Նկ. 2. Գոգնոց-մեզար, ասեղնագործված բրդյա գունավոր թելերով, 1886 թ., Սեբաստիայի շրջ. գ. Խորոխոն

Ռոմբաձև նախշեր օգտագործվել են նաև Վասպուրականի, Տարոնի, Սասունի և այլ գավառների կանանց գոգնոց-մեզարի, տղամարդկանց շալվարի[10] կտորը ասեղնագործությամբ զարդարելու մոտիվներում։ Նախշերը սկզբնական շրջանում ունեին իրենց գաղափարական իմաստը, հետագայում վերածվեցին ուղղակի զարդանախշերի։

Սեբաստիայում կանանց գոգնոցն ավելի նեղ էր, քան մյուս դավառներինը, թե՛ չափով և թե՛ նախշազարդերով յուրօրինակ. հաբոնությունը անցկացրած կնոջ գոգնոցն ուներ ռոմբերի հետ նաև խաչաձև նախշեր[11]։ Այն երբեմն զարդարում էին կոճակներով, ուլունքներով, մարջանով։

---

8 Ա. Պ ա տ ր ի կ, նշվ. աշխ., տախտակ 50, նկ. 3։

9 Հայաստանի պատմության թանգարան, ազգագրական ֆոնդ, №№ 641, 642, 647, 669, 8490/3, 8490/4 գոգնոցները։

10 Շատախի շրջանի Թաղ գյուղում արտադրված բրդյա կտորը բացի լայն գծանախշերից զարդարվում էր նույնպես ռոմբաձև նախշերով։

11 Տե՛ս Հայաստանի պատմության թանգարան, ազգագրական ֆոնդ, №№ 647, 469 գոգնոցները։

Գոգնոցը հատուկ տեսք, գեղեցկություն էր տալիս տարազի ամբողջական համալիրին։ Գոգնոցի ոճավորված բուսական և երկրաչափական մոտիվները, որ ընդհանրապես հատուկ են հայկական զարդարվեստին, փնջիկներով, գունավոր կոճակներով և այլ միջոցներով դրանք զարդարելը ունեն նաև գեղագիտական նշանակություն։

Կանանց տարազի համալիրի մեջ հիմնական մասերից մեկն էլ կարճ վերնազգեստ-սալթան էր։ Սեբաստիայում գոյություն ուներ սալթայի երեք տարբերակ, որոնց հիմքում ընկած է ձևվածքի տարբերությունը։ Առաջին տարբերակը, որ սովորաբար կարում էին մուգ շագանակագույն մահուդից, առջևից երկու փեղկով էր, ուսերը կարով, կողքերին լայնացնելու նպատակով ավելացվում էր մեկական ամբողջական հատված, որի գեպի առաջ ծալած կեսը առջևի փեղկերի լայնացուցիչն էր, մյուս կեսը՝ ետևի, ըստ որում այդ կտորի վերևում ձեղք էին անում և միացնում եռանկյունաձև հավելվածը։ Թևերը երկար էին, լայնությունը հիմքում և թևաբերանում՝ հավասար։ Կանգնած օձիքը առջևում վերջանում էր ուղիղ անկյունով։ Մեկ կարճ վերնազգեստ-սալթա կարելու համար անհրաժեշտ էր 70 սմ լայնքով 1,5 մ մահուդ և նույնքան էլ կտավ կամ մետաքսյա կտոր աստառապատման համար։ Այս տարբերակը տարածված էր Խորոխոն, Քարհատ, Քոդնի, Բրաբերդ գյուղերում։

Կարճ վերնազգեստի երկրորդ տարբերակը մուգ կարմիր կամ մուգ կապույտ գույնի մահուդից էր. կողքերից առաջինի նման ավելացված էր մեկական ամբողջական կտոր։ Թևերը հիմքում լայն էին, թևաբերանում՝ նեղ, անութում ավելացված էին եռանկյունաձև հավելվածներ։ Կանգնած օձիքը առջևում աստիճանաբար նեղանում էր և սեպաձև միացվում հիմքին։ Երկրորդ տարբերակի համար նույնքան կտոր էր անհրաժեշտ, որքան առաջինի։ Այս տարբերակը տարածված էր Թոզորակ, Կովտուն, Կավրա գյուղերում և Սեբաստիայում (տե՛ս աղյուսակ I, նկ. 5ա, բ)։

Երրորդ տարբերակը լինում էր շագանակագույն, մուգ կարմիր և մուգ կապույտ գույնի մահուդից, կողքերին ավելացված հատվածները մինչև թևատակ չէին հասնում, միանում էին եռանկյունաձև հավելվածին ներսի կարով։ Կանգնած օձիքը առջևում ցցուն ուղղանկյուն վերջավորություն ուներ, երբեմն էլ՝ նույն լայնությամբ միացված առջևի երկու փեղկերին։ Թևաբերանը լինում էր և՛ հիմքին հավասար, և՛ համեմատաբար նեղ։ Այս տարբերակը լայն տարածում էր գտել Խորսանա, Դավրա, Խանծառ, Կավրա գյուղերում և հատկապես Սեբաստիա քաղաքում։ Երրորդ տարբերակը ավելի ուշ շրջանի ձև է։ XIX դ. վերջին և XX դ. սկզբին ներմուծված մահուդը, որ ավելի լայն էր, սալթա կտրելու համար անութներում կարիք չէր զգում կրկնակի լայնացնելու, հետևապես կողքից ավելացված կտորները նեղ էին ձևում և անութում էլ մեկ հավելվածը բավարարում էր ցանկալի լայնությանը (տե՛ս աղյուսակ I, նկ. 6ա, բ)։

Այսպիսով, կարճ վերնազգեստը՝ սալթան, իր երեք տարբերակներով հատուկ էր Սեբաստիայի գավառին ընդհուպ մինչև XX դ. սկիզբը։ Այն հագնում էին հարսներն ու աղջիկները։

Սալթայի տակ ամրացնում էին կրծկալը։ Սալթան զարդարում էին ոսկեթելով ասեղնագործ ոճավորված բուսական մոտիվներով և տրեզով։ Այս կարգի վերնազգեստը հատուկ էր նաև Արևմտյան Հայաստանի շատ այլ գավառների։

Կանանց տարազի անբաժան մասն էր գոտին։ Գոտու երկու տեսակ էր տարածված այստեղ, մեկը նեղ էր, զարդարված ուլունքներով, օրոճներով, արծաթյա դրամներով, սադաֆով և ուներ արծաթյա մեծ ճարմանդ[12], որի տակ կախում էին արծաթյա շղթայի մի քանի աղեղնաձև շարան[13]։ Այս տեսակը շատ գործածական էր գյուղերում։ Գոտու երկրորդ տեսակը բրդյա կամ բամբակյա թելերով հյուսված կտոր էր՝ քառանկյունաձև, որը երկտակ ծալած եռանկյան վերածելով, ոլորում և փաթաթում էին մեջքին։

Կանանց գլխի հարդարանքը յուրօրինակ էր, հասակի համեմատ այն փոխվում էր։ Գյուղերում գլխի հարդարանքի մեջ կարևոր տեղ էր գրավում դեղին փայլուններով զարդարված գլխաշորաստիսը, որը ճակատամասում միանում էր ուռուցիկ ճակտոց-պոլոզին, դրա ծայրերը նետում էին ուսերի վրայով ետ։ Մազերը քթի ուղղությամբ հերագծով բաժանում էին երկու մասի, մանր հյուսեր անում. այդ հյուսերը միացնում էին միմյանց զարդակապերի միջոցով։ Զարդակապերի ուլունքազարդ ծայրերը ականջների տակով նետում էին թիկունքին, աղջիկները կապում էին դաջածո բուսանախշերով զարդարված գլխաշոր, ոմանք ճակատին ունենում էին գունավոր ուլունքներից կազմված ծոպեր։ Մազերի հյուսերի վրայով կախում էին մազկապ։ Որպեսզի ծամերի հյուսվածքի մազկապը կանոնավոր մնա, ուսերից քիչ վար կապում էին ժապավեն, որը զարդարում էին կապտավուն գույնի ուլունքով, զարդադրամով։

12 Տե՛ս Ա. Պատրիկ, նշվ. աշխ., տախտակ 50, նկ. 3 և տախտակ 66, նկ. 1։

13 «Գեղունի», 1901—1902, էջ 21 նկարը։



Նկ. 3. Կարճ վերնազգեստ-սալթա, մահուդյա, ասեղնագործված ոսկեթելով. XIX դ. վերջ. Սեբաստիա



Նկ. 4. Կարճ վերնազգեստ-սալթա, մահուդյա, XIX դ. վերջ. Սեբաստիայի շրջ. գ. Խորսանա

Հարսները կապում էին գլխի կապ-մալզաթի, որի վրայից դնում էին ուռուցիկ զարդը՝ ճակտնոց-պոլոզը։ Գյուղերում աղջիկները ծածկում էին արծաթյա դրամներով զարդարված գլխարկ-արախչի։ Տարեց կանայք հագնում էին ամբողջական պարեգոտ՝ ֆստան, գլխին ծածկում էին տափակ դդակ-ֆես և կարմիր գույնի գլխաշոր՝ ափուխ։

Յուրօրինակ էր Սեբաստիայի կանանց հարսանեկան տարազը և հատկապես գլխակապման ձևը, որը նկարագրում է Ա. Պատրիկը[14]։ Մանճըրլըգ գյուղում հարսանեկան տարազի մեջ յուրօրինակությունը արտահայտվում էր հատկապես գլխի հարդարանքով։ Բարձրադիր խույրը սպիտակ գույնի քողով ծածկելուց հետո զարդարում էին ուլունքներից և գունավոր փետուրներից կազմված երեք փնջիկով («ճղան»)։ Վերջինիս օգտագործումը ընդունված էր նաև Սասունում՝ փեսայի գլխի հարդարանքում։ «Ճղանն» զարդաձև լինելուց բացի ունի սիմվոլիկ նշանակություն։

Հարսի զգեստի ամբողջական համալիրի՝ հալավի մեջ կարևոր նշանակություն ուներ գլխի ծածկոցը՝ պեթլան, որը լինում էր նաև կարմիր գույնի դիպակից կամ սնդուսից։ Գործածական զարդերն էին՝ նորահարսի համար արծաթյա լայն ապարանջանը (թևնոց), մատանին, ականջողերը, ոսկյա դրամների շարանով կազմված մանյակը։

Կանանց զարդերը բազմատեսակ էին և ըստ հասակի, ինչպես և զգեստը, որոշ փոփոխության էին ենթարկվում։ Գործածում էին ականջի, վզի, կրծքի, մեջքի, գոտկատեղի, ձեռքի զարդերի տեսակները։ Վերնազգեստ-սալթայի վրա ըստ սովորության ամրացնում էին օրոճիկ. Կովտունին հատուկ զարդ էր շահպաղին, որը քունքի մոտ ամրացվում էր գլխի հարդարանքին և ականջի տակով անցնելով, կախվում էր թիկունքից[15]։

Արծաթյա թևնոց-բազպանը տարածված զարդ էր թե՛ հարսների և թե՛ աղջիկների համար։ Տիվրիկում ու Կյուրինում աղջիկների գործածական զարդն էր ապակյա ապարանջան-բազպանը («սրճա»)։

Սեբաստիայում տարածված էր զունավոր մանր ուլունքների գործածությունը։ Ուլունքներով էին զարդարում գլխաշորի եզրերը, գոտին, վզնոց-շեֆտեն, գոգնոցը։ Մետաղյա զարդերն ու ուլունքները գործածվում էին միաժամանակ. դժվար է ասել. թե որն է ավելի հին, բնորոշը տվյալ գավառին, բայց ըստ թանգարանային նյութերի ակնհայտ է երկուսի զուգակցված գործածությունը։

Տարբեր նյութերից պատրաստված զարդերը տարազի անհրաժեշտ մասն էին կազմում, լրացնում էին նրա ամբողջությունը և տալիս ավելի գեղեցիկ, հաճելի տեսք։

Կանայք ոտքերին հագնում էին նախշազարդ գուլպա ու սև գույնի քող։ Գուլպայագործության եղանակը այստեղ յուրօրինակ էր. ի տարբերություն մյուս գավառների, Սեբաստիայում գուլպան գործում էին մեկ ծայրը կեռ հինգ շղերի—շղերի միջոցով. թելը գցում էին վզին, ձախ ձեռքով բռնում գործվելիքը, իսկ աջով՝ ազատ շուղը, որի կեռիկով ծայրը օղակի մեջ մտցնելով, ձախ բթամատի օգնությամբ թելը գցում էին կեռիկի վրա և աջ ձեռքով հանում այն օղի միջից, այսպես կազմվում էր նոր օղ՝ հինգերորդ ազատ շղի վրա։ Գուլպան գործելը սկսում էին թաթից (քթից)։

Դործելու եղանակի հետ մեկտեղ յուրօրինակ էին նաև գուլպայագործության մեջ օգտագործված զարդամոտիվները։ Գուլպան զարդարում էին երկրաչափական նախշերով, որով և դրսևորվում էր Սեբաստիայի նյութական մշակույթի այլ բնագավառների ոճի հետ ունեցած ընդհանրությունը։ Գուլպայագործությանը բնորոշ էին լայնակի ուղիղ կամ բեկբեկուն գծերը, խաչաձև և «ծտեր» կոչված նախշերը։ Երբեմն երեխաների գուլպաների վրա արվում էին ոճավորված բուսանախշեր՝ հատկապես նշաձև[16]։ Նորահարսի կամ օժիտի համար գործած գուլպան լինում էր սպիտակ գույնի, ցանցկեն նախշերով, որոնք ստացվում էին հյուսելու ընթացքում օղերը ավելացնելու կամ պակասեցնելու հետևանքով[17], շիտակ ու շրջոնք գործելու միջոցով[18]։ Գուլպայագործությունը քաղաքում և նույնիսկ գյուղում շատ տարածված զբաղմունք էր ու ծառայում էր նաև վաճառահանմանը։

Տղամարդկանց տարազի բաղկացուցիչ մասերն էին շապիկը, աշխատանքային վերնաշապիկը, բաճկոնը, ելակը, շալվարը, գոտին, գլխի հարդարանքը, ոտքի փաթաթանը, տրեխները։ Շապի-

---

14 Ա. Պ ա տ ր ի կ, նշվ. աշխ., էջ 38։

15 Վ. Հ ա մ բ ա ր ձ ո ւ մ յ ա ն, նշվ. աշխ., էջ 166։

16 Տե՛ս Հայաստանի պատմության թանգարան, ազգագրական ֆոնդ, № 1216, 8490/13։

17 Հայաստանի պատմության թանգարանի ազգագրական ֆոնդի № 8309, 8490/16 և 8491 գուլպաները ունեն վերոհիշյալ նախշերը։

18 Ն. Ք. Ա վ ա գ յ ա ն, Հայկական գուլպաներն ու սոնապանները և նրանց զարդանախշերը, «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4, էջ 262։

էր և աշխատանքային վերնաշապիկը մեծ մասամբ նույն կտորից էին՝ կտավից։ Զևվածքը նման էր Արևմտյան Հայաստանի մյուս գավառների տղամարդկանց շապկի ձևվածքին։ Շապիկի վրա հագնում էին վարտիկը, իսկ երիտասարդները՝ նաև շալվար։



Ան. II

Տղամարդկանց զգեստի մեջ յուրօրինակ ձև ուներ շալվար-զպզան կամ տիզիլիկը, որի սրունքները շատ նեղ էին, իսկ վերևի մասը՝ վեղեկը, խիստ լայն[19]։ Գոտեկապի-խոնջանակապի միջոցով զպզայի լայն վերևի մասը հավաքվում էր գոտկատեղում շարով (տե՛ս աղյուսակ II, նկ. 1ա, բ), իսկ ետևից այդ լայն մասը, որ բաղկացած էր 70 սմ լայնություն ունեցող մահուդի 3 լայնքից, 13 դարսերով հավաքվում էր կարի մեջ, որը ընկած էր երկու փողերի միջև։ Փողերը նեղ էին և երկու կարով։ Կարերը, ինչպես նաև փողաբերանն ու զրպանաճեղքերը, զարդարում էին ոլորված հաստ սև դույնի մետաքսաթելով և նույն թելից հյուսած նեղ տրեզով։ Մեկ շալվար կարելու համար անհրաժեշտ էր 4 մետր մահուդ, 3 մետր կտավ աստառապատման և գրպանների համար։

---

19 Ն. Փիլիկյան, Ազգագրական պատմություն Սեբաստիո Ալիսի հովտի, անտիպ, ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվ, թղթապանակ 23, էջ 15։

Շալվարը, ինչպես նաև տարազի մյուս մասերը մինչև XIX դարի վերջերը կարում էին տներում, յուրաքանչյուր ընտանիք իր կարիքների համար, իսկ հատկապես XX դ. սկզբին պատվիրում էին դերձակներին։

Սեբաստիայի տղամարդկանց տարազի անհրաժեշտ մասերից մեկն էր ելակը, որը հագնում էին վերնաշապկի վրայից։ Ելակի երկու փեղկը ասեղնագործում էին բուսանախշերով (տե՛ս աղյուսակ II, 2գ)։ Փեղկերի եզրերին կարված գնդաձև կոճակներով և մետաքսաթելից հյուսած տրեզի կոճակօղերի միջոցով զգեստն ամրացվում էր կրծքամասում, իսկ ներքևի եզրը ամփոփվում էր լայն գոտու մեջ։ Գոտին, որ սովորաբար 3—3,5 մետր երկարություն ուներ, մի քանի անգամ փաթաթում էին մեջքին և ծայրերը թաքցնում փաթաթածի տակ։ Գոտին Կյուրինի, Տրիպոլսի բրդյա կտորից էր, իսկ ավելի թանկարժեքը՝ Խորասանից և Լահոռից էին բերում։ Գոտին լինում էր նաև հասարակ բամբակյա կտորից։ Ընտրությունը արվում էր ըստ կրողի տնտեսական վիճակի։ Թանկարժեք մետաքսյա գոտին հնարավորություն ունեին գործածելու ունևորները, հետևապես գոտին հանդիսանում էր նյութական կարողության չափանիշը։ Գործածության մեջ էր նաև նեղ, պարանի նման գոտին, որը համարվում էր աղքատության նշան։ Ժողովրդի մեջ տարածված էր «Զուվան գոտի ըլլալ»[20] դարձվածքը, որը նշանակում էր աղքատանալ, իբրև գոտի պարան կապել։

Գոտու հետ կապում էին լայն կաշե գոտին՝ սերաթլիկը, որը ուներ ի հարկին նաև դանակ և զենք տեղավորելու հարմարանք։ Հայաստանի մյուս գավառներում նույնպես գոտին ուներ մի քանի նշանակություն։ Այն տարազի կոմպլեքսը լրացնելու իր կարևոր նշանակությամբ հանդերձ հանդիսանում էր քաջության, արիության խորհրդանիշ։ Գոտին կատարում էր պահպանակի, գրպանի դեր։ Սեբաստիայի տղամարդկանց գոտու առանձահատկությունը կայանում էր նրանում, որ ուներ հատուկ կաշե հարմարանք, որի միջոցով դրսևորվում էր գոտու ընդհանրապես ունեցած նշանակության մի մասը։ Այսպիսով. ի տարբերություն մյուս գավառների, Սեբաստիայի տղամարդկանց գոտին կրկնակի էր՝ և՛ կտորից, և՛ կաշվից։ Դրանով իսկ դրսևորվում էր Սեբաստիայի տղամարդկանց տարազի առանձնահատկություններից մեկը։

Տարածված էր գավառում տղամարդկանց կարճ վերնազգեստ-բաճկոնի երկու տարբերակ, որոնք բնորոշվում էին թե՛ ձևվածքով, թե՛ կտորի որակով և թե՛ զարդարման եղանակով։ Առաջին տարբերակը աշխատանքային էր. կարում էին բամբակյա կամ բրդյա նոսր և խոշոր հյուսվածքով կտորներից։ Ձևվածքը հետևյալն էր՝ 46 սմ լայնություն ունեցող կտորը՝ երկտակ ծալած 65 սմ և 57 սմ երկարությամբ, վզի շրջանաձև բացվածքով և երկար կտորը ուղիղ կենտրոնից կիսած երկու հավասար մասի կազմում էր հիմնական կորպուսը, որին միացվում էին ուղիղ ձևած թևերը։ Թևաբերանը և կողքերը ճեղքով էին, կանգնած օձիքը, թևաբերանը եզերվում էին մետաքսաթելից հյուսված կապույտ գույնի տրեզով։ Առջևի երկու փեղկերի եզրերին կարում էին եռանկյունաձև մեկական կտոր շեղ կողմով։ Աշխատանքային բաճկոնը առանց աստառի էր։ Այն հատուկ էր Օդուր գյուղին և Տիվրիկի ամբողջ շրջանին (տե՛ս աղյուսակ II, նկ. 3ա, բ)։ Երկրորդ տարբերակը տոնականն էր, որն իր ձևվածքով գրեթե նույնն էր, բայց աջ ու ձախ փեղկերը հավասար էին երկարությամբ ետևի մասին։ Սրա թևերը ուղիղ էին և հիմքում ու թևաբերանում հավասար լայնությամբ։ Երկրորդ տարբերակը ավելի շքեղ էր զարդարվում, ոսկեթելից հյուսած տրեզով և ոլորված ոսկեթելով կազմված զարդանախշեր ուներ, ձախ փեղկին վերադիր գրպան՝ դարձյալ զարդանախշերով (տե՛ս աղյուսակ II, նկ. 4ա, բ)։

Վերադիր գրպանի առկայությունը ցույց է տալիս, որ այս տարբերակը ավելի ուշ՝ XX դ. սկզբին է տարածվել Խորսանա և նրա շրջակա գյուղերում։

Տղաների տարազում գործածական էր բամբակյա վանդակավոր կտորը. վերնաշապիկը հատկապես կարում էին վանդակավոր կտորից, որը հավաքվում էր մուգ գույնի բրդյա կտորից կարված նեղ շալվարի տակ, իսկ վրայից կապում էին գծերով լայն գոտի։ Ոտքերին հագնում էին երկրաչափական նախշազարդերով գուլպա։ Շատ տարածված էին գուլպայագործության մեջ թոշնանախշերը։ Ոտնամանը դեպի վեր ցցված սրաքիթ քոշերն էին։

Տղամարդկանց գլխի հարդարանքը պարզ էր. քաղաքում ծածկում էին ֆես, շուրջը փաթաթանափուխով պատված։ Ետևից փաթաթանի ծայրերը կախվում էին մեկ անգամ հանգույց կազմելուց հետո։ Հասակավոր տղամարդիկ ծածկում էին կապույտ կամ մանուշակագույն ֆես, որի շուրջը նույնպես փաթաթան-ափուխ (ապարոշ)։ Գյուղերում տարածված էր սև գույնի թաղիքե գլխարկը կամ դդակ-արախչին։

Աալիսի վերին հովտի գյուղերի տղամարդկանց զգեստի կոմպլեքսի մեջ հատկանշական էր սրածայր տրեխը. երիտասարդները գուլպայի փոխարեն օգտագործում էին ոտքի երկար փաթա-

20 Կ. Դ ա ք ի կ յ ա ն, Բառագիրք սեբաստահայ գավառալեզվի, Երուսաղեմ, 1952։

թան, որը սկսում էին մատներից, փաթաթելով հասցնում մինչև ծնկների տակ և կապով ամրացնում։

Երիտասարդ տղամարդիկ և արհեստավորները ձմռանը հագնում էին մուգ գույնի չուխա[21], որը կարում էին «աբա» կոչված տեղական կտորից[22], գոտկատեղում՝ կարով։

Այսպիսով, Սեբաստիայի կանանց և տղամարդկանց ժողովրդական տարազը իր առանձին տարրերով ուներ ընդհանրություն հայկական մյուս գավառների ժողովրդական տարազի հետ, բայց տարազի ամբողջական համալիրը հանդիսանում էր Սեբաստիայի յուրօրինակ մշակույթի վառ արտահայտությունը։

Կանանց տարազը ավելի ցայտուն էր դրսևորում ազգային բնորոշ առանձնահատկությունները, իսկ տղամարդկանցը. ինչպես միանգամայն ճիշտ է նկատել Ա. Պատրիկը, Կեսարիայի, Խարբերդի, Կիլիկիայի, Տիգրանակերտը շրջանների տղամարդկանց տարազի նման կրում էր որոշ անատոլիական երանգներ[23]։ Ավանդական տարազը Սեբաստիայում պահպանվեց մինչև XX դ. սկիզբը։ Թուրքական կառավարության վարած հայահալած քաղաքականության պատճառով Արևմտյան Հայաստանից Արևելյան Հայաստան տեղի ունեցած ներգաղթի միջոցով սեբաստահայ կնոջ և տղամարդու տարազի առանձին տարրեր երկար ժամանակ իրենց գոյությունը շարունակեցին նոր բնակության վայրերում՝ խորհրդային Հայաստանում[24]։

---

21 Տե՛ս Ա. Պ ա տ ր ի կ, նշվ. աշխ., տախտակ 51, նկ. 3։

22 Կ. Գ ա բ ի կ յ ա ն, նշվ. աշխ.։

23 Ա. Պ ա տ ր ի կ, նշվ. աշխ., էջ 23։

24 Սույն աշխատանքի համար հիմնական աղբյուր են ծառայել մեր գրի առած նյութերը, համաձայն Երևանի Շահումյանի շրջանում բնակվող սեբաստահայեր Մարիցա Սուքիասի Փիլաֆյանի (Կովտուն գյուղացի), Հարությունի Սիմոնի Բեկյանի (Կովտուն գյուղացի) և Վարդուհի Տաքեսի Շերբեթյանի (Զարա գյուղացի) բանավոր հաղորդումների։ Բացի այդ կարևոր աղբյուր են նաև այժմ ԱՄՆ-ի բնակիչներ, սեբաստահայեր Սաթենիկ և Ներսես Փիլիկյանների, Սիրան Մարգարյանի, Արսեն Աճեմյանի վերջերս իբրև նվեր Հայաստանի պատմության թանգարանին ուղարկած սեբաստացի կնոջ և տղամարդու զգեստի նմուշները։ Գրի առման և հավաքչական աշխատանքներին մեծ օգնություն է ցույց տվել Երևանի բնակիչ, սեբաստահայ Սուրեն Սարգսյանը։ Գծագրերը կատարել է Ռոբերտ Մարտիրոսյանը։